

**ՀԱՎԱՍԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՐԱՐ
ՄԻՋԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ**

Ալբերտ ԲԱՂԱԼՅԱՆ

ԵՊՏՀ Կոմերցիայի և բիզնեսի
կազմակերպման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. հակամենաշնորհային քաղաքականություն, մրցակցություն,
մրցակցային միջավայր, բիզնես միջավայր

Բիզնես միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: Երկրում տնտեսական առաջընթացի ապահովման գրավականը գործարարության բարձր ակտիվության և ներդրումային կայուն հոսքեր ներգրավելու նպաստավոր միջավայրի ձևավորումն է: Այս նպատակի իրականացման առանցքային երաշխիքը գործարարությանն աջակցման միջոցների հիմնովին վերանայումն է՝ իրավական տեսանկյունից:

Երկրում գործարար միջավայրի բարելավման և զարգացման, ինչպես նաև տնտեսության մեջ բարձր մրցակցային ակտիվություն պահպանելու համար նախևառաջ կարևորվում է արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը: Այն նպատակ է հետապնդում պաշտպանել բարեխիղճ մրցակցությունը և ապահովել շուկայական հարաբերությունների արդյունավետությունը և շուկան “մաքրել” մենաշնորհների կողմից ստեղծած խոչընդոտներից:

Ընդհանուր առմամբ, մենաշնորհները պատմականորեն ձևավորվել են շուկայական հարաբերությունների ծագման ու զարգացման արդյունքում: Իսկ մրցակցությունը, ապրանքների ու ծառայությունների գնի, առաջարկ-պահանջարկի հետ միասին, հանդիսանում է շուկայի կարևոր տարրերից մեկը:

Տնտեսական մրցակցությունը, որպես տնտեսական կատեգորիա, արտահայտում է այն արտադրատնտեսական հարաբերությունները, որոնք կապված են հաջողության հասնելու, տնտեսական գործունեությունը, արդյունավետությունը բարձրացնելու և մրցակցի նկատմամբ շուկայում շահավետ դիրք գրավելու հետ: Մրցակցությունը վաճառողի (արտադրողի) միջև

մրցապայքար է առավելագույն շահույթ ստանալու, իսկ սպառողի միջև՝ ապրանք գնելու համար:

Շատ կարևոր է ընտրել ճիշտ հակամենաշնորհային քաղաքականություն, սակայն, ընտրելու հետ մեկտեղ, նաև անհրաժեշտ է ապահովել տվյալ ընտրված հակամենաշնորհային քաղաքականության անկողմնապահ իրականացում:

Մենաշնորհի առաջացումը կանխելու և տնտեսական մրցակցությունը պաշտպանելու գործում մեծ դեր է կատարում պետությունը:

Մենաշնորհների վրա պետության ազդեցությունը դրսևորվում է մրցակցության պետական կարգավորմամբ: Իսկ վերջինիս հիմնական ուղղություններից մեկը տնտեսության հակամենաշնորհային կարգավորումն է, որն անհրաժեշտ է դիտարկել որպես պետության կողմից տնտեսական, օրենսդրական և վարչական միջոցառումների համալիրի իրականացում՝ ուղղված մրցակցության զարգացման համար պայմանների ստեղծմանը, շուկայի՝ չափից դուրս մենաշնորհացման կանխմանը և տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհային կամ գերիշխող դիրքի չարաշահման արգելմանը:

Մենաշնորհների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում իրականացնել հակամենաշնորհային կարգավորում, որն էլ հենց հանդիսանում է պետական գործառույթ և կոչված է ապահովել հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը և դրա նպատակները: Հակամենաշնորհային քաղաքականությունը հանդիսանում է տնտեսության պետական կարգավորման ուղղություններից մեկը և ներկայացնում է միջոցառումների համակարգ (օրենսդրություն, հարկային քաղաքականություն և այլն), որն ապահովում է արտադրության և շուկաների մենաշնորհացման սահմանափակումը՝ մրցակցության ակտիվացման նպատակով:

Հակամենաշնորհային կարգավորումը վճռական նշանակություն ունի հատկապես անցումային տնտեսություններում, որտեղ տնտեսական գործունեության վարչական կառավարման համակարգն աստիճանաբար փոխարինվում է շուկայական ինքնակարգավորման կառուցակարգով, սակայն մրցակցության նախապայմանների բացակայության պայմաններում վերջինը դեռևս ի վիճակի չի լինի ապահովել տնտեսական աճի արագ տեմպեր և եկամուտների առավել հավասարաչափ բաշխում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հատկապես ներկայում Հայաստանի տնտեսության պայմաններում հակամենաշնորհային քաղաքակա-

նության արդյունավետ կիրառումը հնարավորություն կընձեռի ստեղծել զգալի արդյունքներ, քանի որ շատ հաճախ ազատ մրցակցությունը խոչընդոտվում է մի շարք ոլորտներում գործող մոնոպոլիստների կողմից: Այդ կարգավորումը՝ զուգակցված հայրենական ձեռնարկատիրության աջակցության ու սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպման հետ, երաշխիք կհանդիսանա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հաջող զարգացման գործում:

ՀՀ արդի տնտեսական քաղաքականության առաջնային հիմնախնդիրներից է տնտեսական մրցակցության իրական պայմանների ապահովումը և այդ առումով գործող մենաշնորհների կարգավորումը, ինչպես նաև դրանցով պայմանավորված շուկայական աղավաղումների և դեֆորմացիաների շրտկումը: Երկրի տնտեսությունը ներկայումս բնորոշվում է մենաշնորհացման բարձր մակարդակով, որի հետևանքով բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ տուժում են հակամրցակցային դրսևորումների պատճառով:

Մրցակցության զարգացման համար կարևոր հիմնախնդիր է համարվում նոր տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար հավասար պայմանների ստեղծումը: Թեև Հայաստանի Հանրապետության արանքային շուկաներում նվազեցվել են մուտքի վարչական և այլ տիպի խոչընդոտները, սակայն որոշ շուկաներում խոչընդոտները ստեղծվում են այդ շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից:

Ելնելով ՀՀ-ում բիզնեսի ստեղծման և դրա գործունեության իրականացման ճանապարհին ստեղծված խոչընդոտներից՝ ՀՀ-ում 100 գործարարների շրջանակներում կատարել ենք որոշակի հետազոտություն: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ հենց հակամենաշնորհային քաղաքականությունն է մյուսներից շատը խոչընդոտում բիզնեսի առաջխաղացմանը:

Աղյուսակ 1. Մոտ 100 գործարարների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները՝ կապված բիզնեսգործունեություն իրականացնելու ընթացքում հանդիպող խոչընդոտների հետ

Մենաշնորհներ (գործունեության հետևանքով առաջացող խոչընդոտներ, ոչ արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականություն, անհավասար շուկայական պայմաններ)	65%	100%
Հարկային օրենսդրություն (հաճախակի կատարվող փոփոխություններ)	25%	
Այլ (ֆինանսական և այլ խոչընդոտներ)	10%	

Հետազոտության շրջանակներում, որն անցկացվել է ՀՀ-ում թվով 100 գործարարների շրջանում՝ կապված բիզնես գործունեություն իրականացնելու ընթացքում հանդիպող խոչընդոտների հետ, պարզեցինք, որ ՀՀ-ում բիզնես իրականացնելու ընթացքում ՀՀ գործարարի (հարցվողների մոտ 65%-ը) գործունեությունը նախևառաջ, խաթարվում է մենաշնորհների կողմից: Սա նշանակում է, որ, միանշանակ, ՀՀ-ում հակամենաշնորհային քաղաքականությունը լուրջ կարգավորման, բարեփոխումների և անկողմնակալ իրագործման կարիք ունի:

ՀՀ-ում բիզնես իրականացնելու համար հաջորդ խոչընդոտն, ըստ հարցվողների 25%-ի, հանդիսանում է հարկային օրենսդրությունը և դրանում անընդմեջ կատարվող փոփոխությունները, իսկ մնացածի՝ 10%-ի համաձայն, ՀՀ-ում գործարարությանը զբաղվելու համար հանդիպում են նաև այլ լուրջ խոչընդոտներ, ինչպիսիք են ֆինանսական դժվարությունները (հարցվողների մոտ 10%-ը):

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ, եթե երկրում բացակայում են շուկայական հավասար պայմաններ, արդյունավետ չի գործում հակամենաշնորհային քաղաքականությունը և չի ծառայում իր նպատակակետին, հետևաբար, դրա հետևանքով, աստիճանաբար, եթե ոչ կտրուկ, կնվազեն օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը, ինչից ելնելով էլ հենց կշարունակվի աշխատատեղերի բացակայությունը՝ խթանելով գործազրկությունը, աստիճանաբար կբարձրանա աղքատության մակարդակը և կավելանա երկրից բնակչության արտագաղթի քանակը:

Համաշխարհային Բանկի կողմից վերջին՝ 2013 թվականին հրապարակած «Republic of Armenia: Accumulation, Competition and Connectivity» գեկույցի համաձայն, Հայաստանի տնտեսությունը ամենամեծազնորհացվածն է նախկին ԽՍՀՄ ու Արևելյան Եվրոպայի երկրների շարքում և օտարերկրյա ներդրումների կրճատման պատճառներից մեկն էլ հենց տնտեսության մոնոպոլիզացված վիճակն է¹:

Մեկ այլ՝ միջազգային վարկանիշային Index Mundi տեղեկատվական-հավաքագրական կազմակերպություններից մեկի՝ Index Mundi հայաստանյան տնտեսության խոցելի կետերից է համարել մենաշնորհները²:

Հարկ է նշել, որ ուսումնասիրված 13 ապրանքային շուկաներից միայն մեկն է միջին կենտրոնացված, իսկ մնացած 12-ը բարձր կենտրոնացված են:

Հանձնաժողովի կողմից գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությամբ շուկաներից 46 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 52 տնտեսվարող սուբյեկտ, 70 ոչ պարենային ապրանքային (ծառայությունների) շուկաներում՝ 43 տնտեսվարող սուբյեկտ և 15 դեղերի շուկաներում՝ 10 տնտեսվարող սուբյեկտ: Հանձնաժողովի կողմից համաձայն նոր օրենսդրության գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 7 պարենային ապրանքների առևտրային ցանցեր, 5 բենզալցակայանների ցանցեր, 9 դեղատների ցանցեր³: Վերը նշված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում է մշտական հսկողություն վերջիններիս կողմից մրցակցության օրենսդրության խախտումների կանխարգելման և դադարեցման ուղղությամբ:

¹ World Bank Group, Republic of Armenia: Accumulation, Competition and Connectivity, 2013

² Armenia Economy Profile 2012, http://www.indexmundi.com/armenia/economy_profile.html

³ Նույն աղբյուրը

Աղյուսակ 2. Ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները⁴

Հ/Հ	Ապրանքային / շուկայի անվանում	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը*	Գենտրոնացվածության աստիճանը***	
			Անվանումը	բաժինը (%)		Մասի ՏՏ	Աստիճանը
1	«Հավի ձու՝ կճեպով»	2010թ. 4-րդ եռ	«Առաքաթռչնաբուծական Ֆար»	30	6	86	Բարձր
			«Երևանի թռչն. ֆ-կա» ԲԲԸ***				
			«Լուսակերտի ՏԹՖ» ՍՊԸ***	29			
			«Արգնուտոհմային ԹՏԽ» ԲԲԸ*	27			
2	«Արդ. Վերանշնայատակով ձեռքբերվող լոլիկ»	2010թ.	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ**	62	11	96	Բարձր
			«ՄԱՊ» ՓԲԸ**	30			
			«Եվրոթերմ» ՓԲԸ	3.8			
3	Սուրճի հիմքով պատրաստի րտադրանք	2010թ. 1-ին կիս.	Ա. Բաղդասարյան ա / ձ*	81	19	84	Բարձր
			«Վենոա» ՍՊԸ	1.7			
			«Մարսերայ» ՍՊԸ	1.0			
4	«Լուծվող սուրճ»	2010թ. 1-ին կիս.	«Մոկոնաթ» ՍՊԸ***	48.1	15	85	Բարձր
			«Նյու Ֆորս» ՍՊԸ***	30.3			
			«Մարսերայ» ՍՊԸ***	7.5			
5	«Հատիկավոր սուրճ»	2010թ. 1-ին եռ.	«Կաֆեյու Լերագիլ»***	63.6	9	85	Բարձր
			«Գրանդ Քենդի» ՀՁՍՊԸ***	12.5			
			«Վիվա Առգո» ՍՊԸ***	9.47			
6	«Աղացած սուրճ»	2010թ. 1-ին եռ.	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ***	37.3	9	75	Բարձր
			«Արմեն Համիկ» ՀՁՍՊԸ***	19.8			
			«Ռոյալ Արմենիա» ՀՁՍՊԸ***	18.5			
7	«Արդյունահանված հանք ջուր»	2010թ. հունվար - սեպտ. 30	«Ադամանդ Կ» ՍՊԸ**	74.0	3	100	Բարձր
			«Վիրնյեյ Տուր» ՍՊԸ**	18.7			
			«Վայոդ Չոր» ՍՊԸ	7.22			
8	«Շշալցված աղբյուրի ջուր»	2010թ. հունվար - սեպտ. 30	«ՄԳԱ Վոթրըր» ՍՊԸ*	35.4	37	60.5	Միջին
			«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	13.6			
			«Էվրիդեյ» ՓԲԸ	11.5			
9	«Շշալցված հանք ջուր»	2010թ. հունվար - սեպտ. 30	«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ***	35.7	37	75	Բարձր
			«Ջերմուկ Մայր Գործարան» Փ	31.1			
			«Բուռուսին» ՍՊԸ***	8.3			

⁴ՄՊՊՀ, «2012 թվականի տարեկան գործունեության ծրագիր», Երևան 2011թ.

Նշենք նաև, որ տնտեսվարող սուբյեկտն (սուբյեկտներից յուրաքանչյուրը) ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող, եթե իրացման ծավալներով գրավում է (միասին գրավում են) ապրանքային շուկայի առնը-վազն մեկ երրորդը (մեկ երրորդը):

Աղյուսակ 3. Ոչ պարենային ապրանքային շուկաների առաջատար սուբյեկտները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները⁵

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ուսումնասիրված ժամանակահատվածը	Առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի		Ապրանքային շուկայի մասնա կիսման թիվը	Կենտրոնացվածության աստիճանը****	
			անվանումը	բաժինը (%)		ժողովրդական	մոնոպոլիստ
1	«Ազոտական պարար-տանյութեր (ամոնիու-մային սելիտրա)»	2011թ. 1-ին եռ.	«Քեթրին Գրուպ» ՍՊԸ***	30.0	11	76	միջին
			«Ագրիմատկո	24.0			
			«Մասիսի	22.0			
2	«Ամրան»	2010թ. Հունվ.-հուլիս	«Միկմետալ»ՓԲԸ**	46.0	5	94	միջին
			«Եվրոպա» ՍՊԸ***	41.4			
			«Մետեքս» ՓԲԸ***	7.1			
3	«Ամրալար»	2010թ. Հունվ.-հուլիս	«Միկմետալ»ՓԲԸ**	41.7	15	85	միջին
			«Եվրոպա» ՍՊԸ***	37.3			
			«Մետեքս» ՓԲԸ***	6.9			
4	«Գաջ»	2010թ. Հունվ.-սեպտ.	«Գաջ» ՓԲԸ**	50.2	3	100	միջին
			«Գաջեգործ» ՓԲԸ**	49.6			
			«Վառնաշ» ՓԲԸ	0.11			

⁵ ՏՄՊԴ, «2012 թվականի տարեկան գործունեության ծրագիր», Երևան 2011թ.

Աղյուսակ 4. Ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաները և մրցակցային իրավիճակը բնութագրող առանձին ցուցանիշները 2014թ.

Հ/Ա	Ապրանքային շուկայի անվանումը	Կենտրոնացվածության աստիճանը	
		տոկոսը	աստիճանը
Պարենային ապրանքներ	Ցորենի ալյուր	87.6	բարձր
	Շաքարավազ	100	բարձր
	Կենդանական յուղ	71.1	բարձր
Ալկոհոլային խմիչքներ	Էթիլային սպիրտ	100	բարձր
	Օղի	67.5	բարձր
	Գինի	89	բարձր
Այլ	Բենզին	93.9	բարձր
	Ծխախոտ	100	բարձր
	Դիզելային վառելիք	95.1	բարձր

Այսպիսով, ուսումնասիրված պարենային ապրանքային շուկաներից պարզ է դառնում, որ ՀՀ-ում հակամենաշնորհային քաղաքականությունն իր գործառույթը, որպես այդպիսին, չի կատարում, քանի որ գրեթե բոլոր ուսումնասիրված շուկաներում առկա է կենտրոնացվածության բարձր աստիճան, ինչը խոչընդոտում է ՀՀ առողջ բիզնես միջավայրի ստեղծման և առաջխաղացմանը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանը դասվում է ամենացածր արդյունավետություն ունեցող հակամենաշնորհային քաղաքականություն իրականացնող երկիրը՝ նախկին ԱՊՀ երկրների շարքում: Եթե հետզհետե այսպես շարունակվի, ապա միանշանակ սաաստիճանաբար կտանի դեպի աշխատատեղերի կրճատմանը և եկամուտների նվազեցմանը:

Շաքարավազի (շաքարի) շուկան իրավամբ կարելի է համարել Հայաստանում ամենահայտնի մոնոպոլիան: Այս մասին տեղյակ են ինչպես տնտե-

սագետ-գիտնականներն ու բանկիրները, այնպես էլ խանութպաններն ու տնային տնտեսուհիները⁶: Այս մենաշնորհին տիրապետող տնտեսավարող սուբյեկտը թեև տարբեր անվանումներով, սակայն կայուն կերպով բացարձակ գերիշխող դիրք է գրավում տնտեսական մրցակցության օրենսդրության կայացման սկզբի տարիներից: Անգամ վառելիքի շուկան այս շուկայի համեմատ պակաս համակենտրոնացված է:

Հասարակությունը հիմնականում հակված է այն կարծիքին, որ մենաշնորհների գերիշխումը հանդիսանում է Հայաստանի հիմնական տնտեսական սահմանափակումը: Այնուամենայնիվ, նման ախտորոշումը ամբողջ տնտեսությունով մեկ մրցակցության իրավիճակի թերի պատկերացում է փոխանցում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս⁷, որ Հայաստանում ավելի մեծ թվով ոլորտներում կան մենաշնորհներ և կենտրոնացվածություն: Սակայն, ավելի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ոլորտների գերակշռող մասը կապված են ենթակառուցվածքների հետ: Իհարկե Հայաստանի չափերի հետ համադրելի որոշ երկրներում ենթակառուցվածքային ոլորտներում գործող ընկերությունների թիվն ավելին է, այնուամենայնիվ վերևում ներկայացված վերլուծությունը փաստեց, որ ենթակառուցվածքային ոլորտները չեն հանդիսանում տնտեսական զարգացման առանցքային սահմանափակում:

Այսօր կարևորվում է պետության դերը շուկայի կարգավորման գործում՝ նպաստելով մի կողմից շուկայում մրցակցության դրսևորմանը, մյուս կողմից՝ մենաշնորհների կարգավորումը: Սակայն կա մի կարևոր խնդիր. պետության կարգավորման գործառույթ իրականացնող սուբյեկտների, անձանց դերում պետք է հանդես գան կրթված, չկոռումպացված, ազնիվ ու պետականամետ մտածողությամբ մարդիկ: Անձինք պատմության բոլոր ժամանակաշրջաններում մեծ դեր ունեն առանձին ոլորտների կարգավորման, տնտեսությունների զարգացման հիմնական վեկտորի ուղղորդման գործում:

Դիտարկելով մեր երկրի տնտեսության զարգացման ներկայիս աճի տեմպը, պետք է փաստել, որ մենաշնորհները երկրի տնտեսության զարգացման համար ունեն բացասական հետևանքներ՝ շուկայում խաթարելով ազատ մրցակցությունը:

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ մենաշնորհների

⁶ Հրայր Մարությանի հիմնադրամ, “Մենաշնորհները Հայաստանում”, Երևան 2013թ.

⁷ World Bank Group, “Republic of Armenia: Accumulation, Competition, and Connectivity”, 2013

և օլիգոպոլիաների բաժնեմասը հայկական շուկայում կազմում է շուրջ 60 տոկոս, ասվում է ՀԲ-ի “Հայաստանի Հանրապետություն. կուտակում, մրցակցություն և միակցելիություն” Հայաստանում աշխատատեղերի ստեղծման խնդրի լուծմանը նվիրված զեկույցում:

Մրցակցային միջավայրի բարելավումները գնահատելու նպատակով որպես ցուցանիշ դիտարկվելու է Համաշխարհային մրցունակության զեկույցի շրջանակներում դիտարկվող հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը: Հայաստանը, լինելով առաջինից երկրորդ մակարդակի՝ արդյունավետությամբ զարգացող (efficiency driven) անցում կատարող պետությունների շարքում, չնայած 2013թ. նախորդ տարվա նկատմամբ արձանագրված զգալի բարելավմանը, դեռևս հեռու է ցանկալի մակարդակից: Այսպես, ներքին շուկայում մրցակցության ինտենսիվության ցուցանիշով՝ Հայաստանը 148 երկրների շարքում զբաղեցնում է 102-րդ դիրքը, իսկ հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով՝ 97-րդ դիրքը (2012թ. համապատասխանաբար 130-րդ և 116-րդ դիրքերը՝ 144 երկրների շարքում):

Հետազոտությունների արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է հակամենաշնորհային քաղաքականություն իրականացնելիս պայքարել *ոչ թե հետևանքների, այլ պատճառների դեմ*, այսինքն՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից առաջնային և նախընտրելի պետք է լինի ոչ թե “հայտնաբերել և պատժել”, այլ “կանխարգելել” սկզբունքը՝ անբարեխիղճ տնտեսավարողների նկատմամբ ավելի մեծ տուգանքներ նշանակելու փոխարեն:

Ուսումնասիրելով ՀՀ մրցակցային միջավայրը և առանձնացնելով հակամենաշնորհային քաղաքականության թերությունները, առաջարկում ենք ՀՀ-ում գործող հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին օժտել անձամբ ուսումնասիրություններ և ստուգումներ իրականացնելու անկողմնակալ իրավասությամբ:

**ՀԱՎԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՐԱՐ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔ
Ալբերտ ԲԱԴԱԼՅԱՆ**

Բանալի բառեր. հակամենաշնորհային քաղաքականություն, մրցակցություն, մրցակցային միջավայր, բիզնես միջավայր

Բիզնես միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն են: Երկրում տնտեսական առաջընթացի ապահովման գրավականը գործարարության բարձր ակտիվության և ներդրումային կայուն հոսքեր ներգրավելու նպաստավոր միջավայրի ձևավորումն է: Այս նպատակի իրականացման առանցքային երաշխիքը գործարարությանն աջակցման միջոցների հիմնովին վերանայումն է՝ իրավականտեսանկյունից:

**АНТИМОНОПОЛЬНАЯ ПОЛИТИКА КАК ВАЖНЫЙ ИНСТРУМЕНТ
УЛУЧШЕНИЯ ДЕЛОВОЙ СРЕДЫ**

Альберт БАДАЛЯН

Ключевые слова: антимонопольная политика, конкуренция, монополия, конкурентная среда, бизнес среда

Бизнес-среда является главной гарантией экономической и социальной стабильности каждой страны, но прежде всего, для улучшения и развития бизнес-среды, а также для поддержания высокой конкурентной активности в экономике страны прежде всего выделяется осуществление эффективной антимонопольной политики. Из многих исследований, авторитетных отчетов и исследований Всемирного банка становится ясно что антимонопольная политика в Армении не находится на желаемом уровне что и является самым первичным и основным препятствием для бизнеса в Армении.

ANTITRUST POLICY AS A TOOL TO IMPROVE BUSINESS ENVIROMENT

Albert BADALYAN

Key words: antitrust policy, competition, monopoly, competitive environment, business environment

Business environment is an economic and social stability guarantee of each country. However implementing effective anti-trust policy is highlighted for keeping competitive activity of the improving and developing the business environment and also first of all for keeping higher effective antimonopoly policy in the country. It becomes clear from numerous studies, international authoritative reports, and surveys which were made by the World Bank that the antitrust policy is not at the desired level, which is the primary and main obstacle of the business environment in Armenia. Thus as the untitrust policy in Armenia is not in perfect level and at the same time studying the competitive environment and separating antitrust policy shortcomings in Armenia we suggest to endow the State Commission for Protection of Economic Competition personally impartial authority to conduct investigations and inspections for enriching the effectiveness of antimonopoly policy.